ւետարանիչներից, որոնց սկզբնաղարդերը հրաշալիք են։ Գլխագրերն ու լուսանցքի զարդերը միայն կինեվարիումով գծած, թռչնագրեր, կենդանագրեր, վիշապագրեր բազմաթիւ, բայց Հեթում Բ.–ի 1287 թուի ճաշոցի գրերի գեղեցկութեան եւ ճոխութեան, առասպելական եւ իրական ձեւակերպութիւններով, հասնել կարող չեն։ Գուցէ եւ մասամբ այն պատճառով, որ երփներանգուած չեն, կիսատ են մնացած բուն բնագրի կամ հատուածների սկզբնաւորութեան հետ կապուած մանրանկարչական տառերը։

Գալով մեր Ձեռագրի Երուս.ի No. 1956–ի մանրանկարչութեան, տալիս ենք խորաններից 8ա, (Պատկ. 9), որ համեմատելի է Թորոսի եւ Ադամեանի համապատասխան խորանների հետ։ Իսկ պատկերագրութեան մասին գաղափար են տալիս 106բ. եւ 171ա., որ Խաչելութիւնն (Պատկ. 10) է եւ խաչից իջեցնելը կամ թաղումը (Պատկ. 11). վերջինը օգտագործել ենք մեր Հաւուց Թառի Ամենափրկիչը աշխատութեան մէջ եր. 83։ Այլակերպութիւնը ակներեւ նման Սեբաստիայի աւետարանին, միայն առաքեալների դիրքը փոխած (140բ.)։

Թորոսի հետեւողութեամբ է նկարուած Սիվրի Հիսարի աւետարանը, Երուսաղէմ բերուած նախընթաց պատերազմից յետոյ Բարգէն Եպիսկոպոսի (ապա կաթ. Կիլիկիոյ) ձեռքով եւ դեռ եւս առանց համարի։ Ձեռագիրը գրուած է 1275 թուին «ձեռամբ յոգնամեղի եւ անպիտան գրչի Ածատուր սարկի, որ մականուն Գաղնուկ կոչի ի մայրաքաղաքն ի Մամիստր ընդ հովանեաւ սու(ր) տաճարացն Սարգսի եւ Բագոսի։ Ի հայրապետութեան տն Յակովբայ։ Եւ ի թագաւորութեան հայոց Լեւոնի»։ Ցիշատակարանի մէջ նկարագրուած է Եգիպտոսի սուլթանի արշաւանքը Կիլիկիա, որի անունը չէ յիշուած, բայց ուրիշ աղբիւրներից գիտենք, որ Փնտուխտարն էր, եւ երկրի աւերումն ու գերեվարութիւնը։ Ստացողներն են Բարսեղ եւ Ստեփանոս քահանաները, ի յիշատակ Կարապետ քահանայի, որ նրանց հայրն էր եւ մօրը Բարեսիկնայ, եւ հօրեղբօրը Արքայ քահանայի, եւ Բարսղի աներոջը Մարկոս քահանայի։

Պատկ. 27.— Ձեռ. Աւետ. Երուս. No. 2563, 345ա., 1271 Թուի

Աստուածատուր «մակագրաւոր» ընծայականի մի քանի տողերը նոյն են Զէյթունի 1256 թուականի եւ Երուս.–ի No. 251–ի ընծայականների հետ, «Որ զայս մատեան» եւն., միակ տարբերութիւնը նրանցից «հաշտակամ»–ի փոխարէն «հաշտակամբ»։ Բայց մանրանկարչական կողմերով շատ նմանութիւն ունի եւ Երուս.ի No. 1956–ի հետ, որոնցից յիշենք սորա ընծայականի 11բ.–12ա. վերին ճակատի թռչունները եւ առասպելական կենդանիները (Պատկ. 12 եւ 13)։ Սիվրի Հիսարի 19ա. դրամների փոխարէն փոքրիկ վարդեակներ ունի, ճիշդ նոյն տեղերում։ Այս նմանութիւնները հաստատուն կերպով